



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

« 18 » սեպտեմբերի 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 224-Ն

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ
ՀԱՇՎԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման հավելվածի 14-րդ կետն ու Արմինե Ղազարի Սարգսյանի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ավագ հաշվապահի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.2-Մ2-2) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի սեպտեմբերի 16-ին անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը (կցվում է)՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Արմինե Ղազարի Սարգսյանին նշանակել Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ավագ հաշվապահ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.2-Մ2-2)՝ 9 ամիս փորձաշրջանով:
2. Արմինե Ղազարի Սարգսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Կոմիտեի ընդհանուր բաժնի պետի պարտականությունները կատարող, գլխավոր մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.4-Մ2-1) Գայանե Գառնիկի Ասմարյանին:
3. Արմինե Ղազարի Սարգսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Recoverable Signature

X

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ